

ժողովածու կազմեցին Որոգինէսի թանկագին վաստակների հաւաքածուից, որ ցայսօր գոյութիւն ունի «Ֆիլոկալիա» վերտառութեամբ: Այս գիրքը արտացոլացնում է այն տպաւորութեան մի ապացոյցը, որպիսին դրոշմել էր եկեղեցւոյ ուսուցչի շնորհափայլ հանճարը մեծ հայրերի հոգու վերայ: Գրիգորը օգնեց Բարսիլին՝ երբ նա խմբագրում էր կանոններն, որոնց ժողովածուն արեւելքի բազմաթիւ վանքերի բուն կանոնագիրքը դարձաւ:

(Եւրոպական)

Յ. Վ. Մ.

ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ 1)

9.

ՄԱՐԱԲԱՍԻ ԽԱՒԱԼԸ.

Նախընթաց յօդուածում գիտեցինք Խորենացու երկու հակասութիւնը, երկուսն էլ բացատրեցինք բնագրի խանգարմամբ և ջանացինք ուղիղը վերականգնել: Մեր Բ. յօդուածում առիթ ունեցանք ցոյց տալու թէ ինչպէս «Հայկայ» անուան յապաւմամբ, Ա. գիրք Տ գլխում, Արմենակն է դարձել Բէլի հետ կոուողը, որով ծագում է հակասութիւն Խորենացու պատմութեան մէջ: Ակնհերե է որ այս հակասութիւնը նմանապէս ձեռագրի աղջատման հետեանք է, ուստի և մեր կարծիքով սխալուած էր հանգուցեալ Բ. Պատկանեանը, ենթադրելով՝ այս Տ գլխի իրր թէ Արիւղենոսից առնուած հատուածի վրայ հիմնուած, թէ Հայաստանում պահպանուել էր երկու աւանդութիւն, որոնցից մէկը Բէլի գէմ՝ եղած կոիւր վերագրում էր Հայկին, մինչդեռ միւսը՝ Արմենակին 2): Եթէ այդպիսի կրկին աւանդութիւն գոյութիւն ունենային, Խորենացին այդ չէր կարող ծածկել, և ստիպուած կլինէր երկուսն էլ յիշել, մէկն ընտրելով միւսն հերքելով, ինչպէս վարուել է Բագրատունիների ծագման խնդրում: Թէև սրանով չեն խախտուում Պատկանեանցի այն հիմունքները, որոնց վրայ յիշուած՝ նա փորձեց Հայկի դիւցազնական շրջանը (Cycle) որոշել Արմենակի շրջանից—ցիկլից:

Բայց այս բոլոր հակասութիւնները չնչին բաներ են համեմատած այն

1) Տես «Արարատ», տարի 1.

2) Вавсия Надписи, 90.

մեծամեծ հակասութիւններին, այն՝ իրար տրամադժօրէն հակառակ տեղեկութեանց, այն՝ իրար հերքող բացատրութիւններին, որ գտնուած են քրննադատները Խորենացու մէջ, մասնաւորապէս Մար Իբասի կամ Մար Աբասի վերաբերութեամբ: Այստեղ արդէն ամեն բան հերքումն է, քանդումն և տապալումն: Կործանուած է պատմաբանի ամբողջ շէնքը և փլատակների տակն է մնում ինքը քերդողը, որ այլ ևս ոչ միայն ծերունի է՝ զառամեալ և մոռաց կոտորութեամբ հակասող, այլ և՛ խարդախ է, խարեբայ և չեղած Մարիբասի յօրինող—մեկոնող: Այստեղ արդէն զիմադրութիւնն անկարելի է թուում ընկճող և տապալող փաստերի առաջ և մնում է միայն անձնատուր լինել, — և անձնատուր էլ եղան: Ամենից վերջը իւր զէնքը վար գրեց Խորենացու ամենաջերմ երկրպագուն, ամենամոլեռանդ հաւատացեալը՝ Մկրտիչ Էմին, որ ոչ միայն հաւատում էր Մարարասի գոյութեանը, այլ և գիտէր այդ Մարարասի գրած գրքի հատորների (թիւը 1): Սա էլ, ասում ենք, 1881-ին զէնքը վար գրեց և արտասանեց իւր նոր հաւատամքը. «Մարարասը երբէք գոյութիւն չէ ունեցել, նա Խորենացու մտացածին ստեղծագործութիւնն է» 2): Միայն թէ Էմինի այս նոր հրատարակութեան մէջ ոչինչ նորութիւն չկար Մարարասի վերաբերութեամբ: Նրանից առաջ նոյն միտքն յայտնել էր Գարագաշեան, և սրանից էլ առաջ՝ Գուտշմիզ:

Մեր նպատակից դուրս է Խորենացի — Մարաշասին դատող և դատափետող քննաբանների կարծիքներն ու վճիռները այստեղ համախմբել, բայց որովհետեւ զրադուած ենք Խորենացու հակասութիւնների խնդրով, ուստի և անհնարին է մեզ նորից չբարձրացնել այնչափ անգամ յեղիկողուած, և ըստ մեզ նաեւ յեղաշրջուած: Մարարասեան հարցը, որովհետեւ այս խնդրին հետ են կապուած Խորենացուն վերագրուած հակասութեանց մեծ մասը: Բայց կրկնաբանութիւններից խոյս տալու և արդէն յայտնի կարծիքները նոր ի նորոյ չյեղիկողելու համար, մենք այդ հարցին կմօտենանք բոլորովին մի նոր կողմից:

Հարցի այդ նոր կողմն է հետեւեալը. Արգեօք Խորենացին իւր Պատմութեան ո՞ր մասերը, ո՞ր գլուխները, ո՞ր տեղեկութիւնները քաղել է (կամ՝ ցոյց է տալիս թէ քաղել է) իսկապէս գոյութիւն ունեցող կամ՝ մտացածին Մարարասեան գրքից: Մի խօսքով ասած, կաշխատենք որոշել Մարարասի ծաւալը:

1) Խորենացու ռուսերէն թարգմանութիւն Էմինի, յտնաջառն, եր. 6, եւ Ա. գիրք, 21 գլուխ եր. 59. (Исторія Арменіи М. Хоренскаго, пер. Эминъ. Москва, 1858).

2) Моисей Хоренскій и Древ. Эносъ Арм. Москва, 1881.

Մեզ թւում է թէ նախ քան դատել և դատափետել, անհրաժեշտ է ճշտիւ որոշել և սահմանաւորել այն նիւթը, որն ենթարկուելու է քնննութեան: Բայց մի՞թէ այդ չեն արել այն բաղմամբիւ և ականաւոր գիտնականները՝ Քատրլմէն, Ռէնան, Ֆրերէ, Սէն - Մարտէն, Գուտշմիդ, Գարագաշ, Պատկանեան և Խորենացու բաղմամբիւ թարգմանիչներն ու հետազոտողները, որոնք քիչ թէ շատ զբաղուել են Մարաբասով: Գրանցից մեծ մասը, օտարազգիները, ընդհանրապէս, դատել են Խորենացու Մարաբասին, ոչ հայերէն բնագիրը հիմք դնելով իրենց քննութեան, այլ որ և է թարգմանութիւն: Եւ վերջապէս, դրանցից բոլորեքեանն էլ չեն հասել այն կատարեալ ժխտողական եղբակացութեանց, որոնց հասան Գուտշմիդ, Գարագաշ և Էմին: Միւս կողմից բոլոր թարգմանութիւնները առհասարակ շատ և շատ անճշտութիւններ և յայտնի սխալներ ունին, որոնք տեղ տեղ գլխովին յեղաշրջում են բնագիրը, Հարկաւ, այդպիսի սխալներն ու անճշտութիւնները շատ կամ սակաւ չափով չէին կարող չանդրադառնալ քննադատութեանց մէջ: Այս էլ կայ, որ Խորենացին, Խորենացու միւս աղբիւրներն և Մարաբասը միշտ շփոթուել են և մէկը միւսի տեղ դատուել, ճշտիւ, որոշուած չլինելով թէ ո՞ր տեղ է վերջանում Մարաբասը, և ո՞ր տեղ է սկսում բուն Խորենացին, կամ նրա միւս աղբիւրները: Ճիշտ է, Լանդլուան փորձել է ջոկել Մարաբասը և դուրս հանել Խորենացու, Պատմութիւնից, եւ այդ առանձնացնելը բոլորովին անհրաժեշտ էր Մարաբասը քննադատելու համար: Բայց Լանդլուայի այդ փորձը աւելի վնասել է գործին, քան օգնել, նա ի՞նչ է արել Մարաբասը առանձնացնելու համար. — Վեր է առել ուղղակի Խորենացու Ա. գիրք ութերորդ գլխից սկսեալ, որի մէջ առաջին անգամ յիշուած է Մարաբասի անունը, մինչև Բ. գիրք իններորդ գլխի վերջը անընդհատաբար, ուր վերջին անգամ յիշուած է Մարաբասի անունը, և այդ ամբողջութիւնը en bloc արտաապել է անուանելով Մարաբասի Պատմութիւն: Գրանցից էլ հեշտ բան չկար, նա ընթերցողներին է թողնում ջոկել, ով ինչպէս կարող է Մարիբասը Խորենացուց () : Սակայն այնքան էլ հեշտ բան չէր այդ ջոկողութիւնը, եւ ընդհանրապէս ասած՝ Լանդլուայի այդ հրատարակութիւնից թէ առաջ և թէ յետոյ, Մարաբասով բոլոր զբաղուողները, թէ Մարաբասի ինքնուրոյն գոյութիւնն ընդունողները և թէ այդ հերքողները, Մարաբաս ասելով հասկացել են Խորենացու այդ ամբողջ հատուածը՝ Ա. գիրք 8 գլխից մինչև Բ. գիրք 9 գլուխը inclusivement: Մինչդեռ Խորենացին շատ տեղերում պարզ կերպով ցոյց է տա-

1) S^{eu} Collection I, p. 11.

լիս թէ ինչ բան է առել Մարաբասից, ինչ բան երգերից և ինչ բան ուրիշ աղբիւրներից, կամ թէ երկու և աւելի աղբիւրներից միանգամայն, Խորենացու այդ մեծ հատուածի ամենամեծ մասը, մեր կարծիքով Մարաբասից չէ, նոյն ինքն Խորենացու՝ իւր վկայութեամբ: Բայց ոչ, միանգամ նախառեալ կարծիքը արմատացել է և բոլորեքեան սովորել են այդ ամբողջ հատուածի վրայ նայել իբրև Մարաբասի վրայ, այս կարծիքը մտել է մինչև անգամ դասադրքերի մէջ¹⁾, և այս տեսակէտից էլ քննում և քննադատում են Խորենացուն: Եթէ, բան է, Խորենացին ցոյց է տալիս մի ուրիշ աղբիւր, յունական, քաղդէական կամ ասորական, քննադատները դժգոհ են այդ բանից և այդ համարում են հակասութիւն, ստախոսութիւն: — «Այսպէս մեր ձերուների պատմագիրն, ասում է Պարագաշեան, ինք իրեն հակառակ, Մարիբասեան պատմութիւնը Քաղդէացւոց արքունի դիւանին մէջ դնելով, մերթ ասէ թէ այն պատմութիւնը գրողք բուն Քաղդէացիք էին, և մերթ փոքունց ոմանց և աննշանից կուտայ զայն հաւաքել. մերթ հանել կուտայ զայն Մար Իբասայ ձեռքով՝ Նինուէի դիւանէն, և մերթ հարցանողաց թէ ուստի գտաւ այն պատմութիւնները՝ պատասխան կուտայ թէ ինք հանց Քաղդէացւոց, Ասորեստանեայց և Պարսից դիւաններէն» (Քննակ. Պատմ. Հայոց, եր 94): Կարծես թէ ասելիս լինեն Խորենացուն. Դու մեզ խոստացել ես ամբողջ ապէս Մարաբասից առնել և պատմել, ուրիշ աղբիւր չենք ընդունում: Բայց Խորենացին այդպիսի խոստում բնաւ չէ տուել: Թէև քննադատների այս բռնած ընթացքը աւելի ևս դիւրացնում է Խորենացուն իւր Մարաբասով հանդերձ կործանել և խորտակել: Մի պատմութիւն, մի ասացուած, որ Խորենացու սեպհական բերանում իւր տեղումն է, վերագրուելով Մարաբասին, դառնում է անտեղի, սխալ կամ սուտ: Եւ այս՝ Մարաբասի ընդարձակութեան, ծաւալի կամ չափսերի վրայօք եղած, եթէ կարելի է այսպէս ասել, նախապաշարմունքը՝ այնչափ զօրեղ է, որ յատկապէս Մարաբասեան չափսով կամ ծաւալով զբաղուող միակ գրողը՝ Պարագաշեան, նմանապէս ենթարկում է այդ վնասակար նախառեալ կարծեաց ազդեցութեանը և Մարաբասին է վերադրում Խորենացու ամբողջ գլուխներ, որ բնաւ կապ չունին Մարաբասի հետ: Իսկ թէ ինչ մեծ թիւրիմացութիւնների անտեղի, խիստ և անարդար վճիռների, դատումների և դատապարտումների են ծագում այդ մեծ սխալից կամ անզգուշութիւնից, այդ մենք կը տեսնենք ներքևում:

1) Հայկական Հին Գաղութեան Պատմութիւն, Զարբանուէան, 1889, Վերետ եր 134 — 150:

Աւրեմն սկսենք համառօտակի Խորենացու գլուխները թերթել՝ որոշելով այն, ինչ որ Մարաբասիցն է ըստ իւր՝ Խորենացու ասուածեան. և այն՝ ինչ որ Մարաբասից չէ։ Խնդրում ենք ընթերցողին, եթէ հետաքրքրուած է այս հարցով, ձեռքն առնել մի խորենացի (անպատճառ գրաբառ բնագիրը) և հետեւել մեզ։ Մենք երկարութիւնից խոյս տալով բաւականանում ենք միայն գլուխների բովանդակութիւնը և շատ հատուածների մի միայն սկզբնաւորութիւնն ու վերջաւորութիւնը նշանակելով։

Ա. գիրք, 87 գլխում առաջին անգամ պատահում ենք Մարաբասի անուանը։ Այս գլխում պատմում է Պարթև Արշակ մեծի և Վաղարշակի մասին և թէ վերջինս ինչպէս ուղարկեց Մարաբասին Արշակի մօտ, արքունի դիւանից հայոց պատմութիւնը բերելու։ Այս գլխում ամփոփուած բոլոր տեղեկութիւնները սերտ կապակցուած են Մարաբասեան մատեանի ծագման պատմութեան հետ, ուստի և իրաւունք ունինք համարել դրանց առնուած նոյն իսկ Մարաբասից, որ իբրև յաւելուած, իւր բերած (կամ յօրինած) գրքի յառաջաբանում կամ վերջաբանում կարող էր այդ տեղեկութիւնները հաղորդել, լինէր Մարաբասը ինքը՝ Վաղարշակին իսկապէս ժամանակակից, կամ թէ Յ. Ք.՝ Բ կամ Գ դարի՝ և կամ ինչպէս մենք կարծում ենք՝ միմիայն Դ դարի գրող։ Այս մեզ համար առ այժմ բոլորովին անտարբեր է։ Աւրեմն առ ժամ մի հաւատալով Խորենացուն, որ նա իրանից չէ յօրինել Մարաբասեան մատեանը, այլ իսկապէս ունեցել է մի այդպիսի մատեան, որ ինքն (մատեանը) իւր մասին տալիս էր ուղիղ կամ կեղծ տեղեկութիւնների, որոնց և հաւատ ընծայեց Խորենացին, — պէտք է ընդունենք որ այդ Մարաբասեան մատեանում կային Պարթևական տէրութեան ծագման յիշատակութիւնը, Արշակի, Վաղարշակի անունները, Մար Աբասի կամ Իրասի կամ ինչպէս դիւրութեան համար մենք գրում ենք մի բառով Մարաբասի անունը և նրա գրքի ծագման պատմութիւնը։

Ա. գիրք, 9 գլուխ, Այս գլխում գրուած է Վաղարշակի նամակը իւր եղբօրը կամ հօրը Արշակին, — « զի գտեալ զըղձալին եղբօր քօ և որդւոյ » — որի մէջ խնդրում է Վաղարշակը Արշակից՝ թող տալ Մարաբասին արքունի դիւանը խուղարկել։ Այդ դիւանում Մարաբասը գտնում է այն մատեանը, որն իբրև թէ Աղեքսանդրի հրամանով Քաղդէարէնից Յունարէն էր թարգմանուած։ Այդ գրուածքի մէջ յիշուած էին Չրուան, Տիտան, և Յապետոս(թէ 1)։ Այդ մատեանից հանում է Մարաբասը Հա-

1) Այս Յապետոս թէ սխալ ձեւի մասն, որ ծագել է յունական տէ մասնկան Յապետոսի հետ ձուլուելուց խօսել են գրեթէ բոլոր քննադատները, առնելով Պետերմանից և Ինճիճեանից (Васкля Надписи, 43, ծնթ. 1)։ Պետականն այն կարծիքին է որ Խա-

յոց պատմութիւնը և բերում է Վաղարշակին « յոյն և ասորի գրով » :
 Ասել է թէ ենթագրեալ Քաղաքէարէն բնագիրը նոյն ինքն Վաղարշակը
 շտեմաւ, ենթագրելով թէ Մարաբասը Վաղարշակին ժամանակակից լի-
 նէր, և թէ Մարաբասը ինքը թարգմանեց Յունարէնից Ասորերէն : Այս
 յիշատակութիւնից պարզ երևում է, որ Մարաբասեան մատեանի վերջին
 խմբագրութիւնը (հաւանականաբար միակը, որ իսկապէս գոյութիւն ունէր)
 չէր ոչ քաղաքէարէն, ոչ յունարէն, այլ ասորերէն : Թէև այդ « Յապետոս-
 թէ » բառից կարելի է եզրակացնել, որ Մարաբասը իւր մատեանը խմբա-
 գրելիս օգտուել է և յունական աղբիւրներից : Բայց առ այժմ մեր նպա-
 տակը չէ քննադատել Մարաբասի մատեանը, այլ միայն որոշել
 ըստ Խորենացու՝ այն իրողութիւններն և դէպքերը, որոնք առնուած
 են Մարաբասից, Մարաբասի բերած մատեանը Վաղարշակը իրրե թան-
 կագին գանձ դնում է արքունի պահեստում և « զմասն ինչ ի յար-
 ձանի հրամայէ գրոշմել » : Ուրեմն պատմութեան մի փոքր մասը մի-
 այն գրոշմում է արձանի վրայ Մծրինում, ուստի և անշուշտ ասորերէն :
 « Յորմէ, ասում է Խորենացին, մեր հաւաստի ի վերայ հասեալ կարգի
 գրուցացս երկրորդեմք այժմ քում հարցասիրութեանդ » (Սահակ Բագ-
 րատունուն), Այս տողերը նշանաւոր են, որովհետև ցոյց են տալիս թէ
 ինչ տեղից ձեռք բերեց Մովսէսը Մարաբասին : Հատ իրաւամբ Գարա-
 գաշն հարցնում է թէ այս « Յորմէն » ի՞նչպէս պէտք է հասկանալ, արձա-
 նէ՞ն թէ գիրքէն : — Յիրաւի, շատ կարեւոր է որոշելը թէ արգեւօք Խո-
 րենացին Մարաբասի ամբողջ պատմութեան օրինակն ունէր, որ արքունի
 պահեստումն էր դրուած, թէ այդ պատմութիւնից « մասն ինչ » — մի
 փոքր մասը, (իրը) արձանի վրայ գրոշմուածը : Խորենացու խօսքերը այս
 վերջին խմբագրութեան են իրաւունք տալիս. « և զմասն ինչ ի յարձանի
 հրամայէ գրոշմել : Յորմէ մեր հաւաստի ի վերայ հասեալ . . . » : Ու-
 րեմն Խորենացու Մարաբասը չէր ամբողջական մի գրուածք, այլ հա-
 տուած միայն : Այս կէտի վրայ անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն
 դարձնել : մենք կտեսնենք ներքեւում թէ ինչպէս արդարանում է մեր
 այս բացատրութիւնը և թէ այս սրճափ թիւրիմացութիւններից ազատե-
 լու է մեզ :

Յետոյ Խորենացին շարունակում է՝ « երկրորդեմք այժմ քում հար-
 ցասիրութեանդ, ձգեւ լով զմեր բնիկ նախարարութիւնս մին-

բենացին ըստ այդպիսի կոպիտ սխալ չէր կարող անել, եւ ոչ էլ Խորենացու ընկերներից
 որ եւ է մէկը, որոնք ծայրայեղ ճշգրտեամբ պահպանել են տառադարձութեան կանոնը
 եւ ամէ մասնիկը չէին գիշեր թէ : Ванск. Нд. стр. 43.

չե ց Գ ա ղ գ է ա ց լ ո ց Ս ա ր գ ա ն ա պ ա լ լ ո ս ։ և և ս մ օ տ ա
 գ ո յ ն ։ Ա հ ա Խ որ ե ն ա ց ու այ ն հ ա կ ի ր ճ խ օ ս ք եր ի ց մ է կ ը , որ ա մ ր ո ղ ջ
 ծ ր ա գ ի ր (պ ր ո գ ր ա մ մ ա) է բ ո ղ մ ն դ ա կ ու մ ։ Ա յ ս խ օ ս ք եր ր Գ ա ր ա գ ա շ ե ա ն
 ի ր ՝ Մ ա ր ա ր ա ս ի մ ա ն ր ա մ ա ն ու ս ու մ ն ա ս ի ր ու թ ե ա ն մ է ջ բ ա ց է թ ո ղ ե լ ,
 մ ի ն չ դ ե ու մ ա ր ա ր ա ս ե ա ն գ ր ու ա ծ ք ի ծ աւ ա լ ը որ ո շ ե լ ու հ ա մ ար ա մ ն ն ա կ ար ե ո ր
 ե ն ա յ ս խ օ ս ք եր ր , Խ որ ե ն ա ց ի ն ա ս ու մ է Ս ա հ ա կ ի ն . « Մ ա ր ա ր ա ս ի ց տ ե ղ ե -
 կ ա ն ա լ ո ղ (Հ ա յ ո ց պ ա տ մ ու թ ե ա ն ը) կ ր կ ն ու մ ե մ ք ե ղ ն ո յ ն ը ա յ ժ մ ն , հ ա ս ց ը -
 ն ե լ ո ղ (վ ե ր ի ց վ ա ր) մ ե ր բ ն ի կ ն ա խ ա ր ա ր ն եր ի (Հ ա յ կ ի , Ա ր մ ն ն ա կ ի
 և ա յ ը) պ ա տ մ ու թ իւ ն ը մ ի ն չ և Ք ա ղ գ է ա ց ի Ս ա ր գ ա ն ա պ ա լ և դ ե ո աւ ե լ ի
 է լ մ օ տ , ա յ ս ի ն ք ն ՝ մ օ տ ՝ ի ր ե ն Խ որ ե ն ա ց ու ն և Ս ա հ ա կ Բ ա գ ր ա տ ու ն ու ն ։
 Հ ա յ լ ը Խ որ ե ն ա ց ու մ է ջ կ ո չ ու մ է ն ա խ ա ր ա ր ՝ « ա ն ու ա ն ի և ք ա ջ ն ա խ ա -
 ր ա ր » , Հ ա յ կ ա յ ս եր ու ն դ ը մ ի ն չ և Ա ր ա յ կ ո չ ու մ ե ն ա ո ա ջ ի ն և բ ու ն
 հ ի ն ն ա խ ն ի ք — « դ ա ո ա ջ ի ն ս ն մ ե ր և գ ր ու ն հ ի ն ն ա խ ն ի ս » ։ Ս ր ա ն ց
 պ ա տ մ ու թ իւ ն ը « ձ գ ե լ ու » է Խ որ ե ն ա ց ի ն մ ի ն չ և Ս ա ր գ ա ն ա պ ա լ , ու ր ե մ ն ա յ գ
 « ձ գ ե լ ը » , պ է տ ք է հ ա ս կ ա ն ա ն ք վ ե ր ի ց վ ա ր : Ա յ ս ի մ ա ց ու ա ծ ի ն եր ա շ -
 խ աւ ո ր ու մ է կ ա տ ա ր ե լ ա պ է ս « և և ս մ օ տ ա գ ո յ ն » ա ս ա ց ու ա ծ ը , Ս ա ր -
 գ ա ն ա պ ա լ ը ե թ է աւ ե լ ի մ օ տ է Խ որ ե ն ա ց ու ն ք ա ն թ է « բ ն ի կ ն ա խ ա ր ա ր -
 ն եր ը » , ա յ գ ն շ ա ն ա կ ու մ է , որ ա յ գ « բ ն ի կ ն ա խ ա ր ա ր ն եր ը » չ ն ն Խ որ ե ն ա -
 ց ու ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց ն ա խ ա ր ա ր ն եր ը , որ ո ն ց պ ա տ մ ու թ իւ ն ը Խ որ ե -
 ն ա ց ի ն կ ա մ ն ն ա ր գ է պ ի վ ե ր հ ա ս ց ն ե լ մ ի ն չ և Ս ա ր գ ա ն ա պ ա լ և աւ ե լ ի
 է լ հ ե ո ու , ա յ լ ա յ գ « բ ն ի կ ն ա խ ա ր ա ր ն եր ն » ե ն Հ ա յ լ ը և ն ր ա յ ա ջ ո ր գ -
 ն եր ը մ ի ն չ և Ա ր ա յ , որ ո ն ց պ ա տ մ ու թ իւ ն ը խ ո ս տ ա ն ու մ է Խ որ ե ն ա ց ի ն վ ե -
 ր ի ց վ ա ր ձ գ ե լ ո ղ հ ա ս ց ն ե լ մ ի ն չ և Վ ա ր գ ա ն ա պ ա լ և դ ե ո աւ ե լ ի է լ մ ե ղ
 մ օ տ ի կ , Է մ ի ն ը կ ա տ ա ր ե լ ա պ է ս յ ե ղ ա շ ր ջ ե լ է Խ որ ե ն ա ց ու ա յ ս ա մ ն ա -
 կ ար ե ո ր ա ս ա ց ու ա ծ ը , թ ա ր գ մ ա ն ե լ ո ղ « Возводя собственные наши наха-
 рарства до Халдейскаго Сарданапала и еще далѣе — ձ գ ե լ ո ղ զ մ ե ր բ ն ի կ
 ն ա խ ա ր ա ր ու թ իւ ն ն ց Ք ա ղ գ է ա ց ը ո ց Ս ա ր գ ա ն ա պ ա լ ո ս , և և ս մ օ տ ա գ ո յ ն »
 (? !) , Մ իւ ս թ ա ր գ մ ա ն ու թ իւ ն ն եր ը թ է և բ ա ո ա ց ի աւ ե լ ի ճ ի շ տ ե ն ,
 բ ա յ ց ա ն ո ր ո շ և խ ու ս ա փ ո ղ , մ ի ն չ դ ե ո ա ն հ ր ա ժ ե շ տ է Խ որ ե ն ա ց ու ա յ ս հ ա -
 տ ու ա ծ ի վ ր ա յ ա ո ա ն ձ ի ն ի մ ն կ ա ն դ ա ո ն ե լ , Ա յ ս հ ա տ ու ա ծ ի ց պ ա ր ղ եր ե -
 լ ու մ է , որ Խ որ ե ն ա ց ու ու ն ե ց ա ծ Մ ա ր ա ր ա ս ի մ է ջ պ ա տ մ ու թ իւ ն ը
 չ է ր ձ գ լ ու մ վ ե ր ի ց վ ա ր մ ի ն չ և Ս ա ր գ ա ն ա պ ա լ , և
 աւ ե լ ի է լ մ ե ղ մ օ տ ժ ա մ ա ն ա կ ո ղ , ա յ լ ը ն գ հ ա տ ու ա լ է ր Հ ա յ կ ի
 ա յ ս կ ա մ ա յ ն յ ա ջ ո ր գ ի վ ր ա յ , և Խ որ ե ն ա ց ի ն իւ ր կ ո ղ -
 մ ի ց կ ա մ ա յ լ ա ղ ր իւ ր ն եր ի ց ա ո ա ծ , ձ գ ու մ է , շ ա ր ու ն ա կ ու մ է Պ ա տ -
 մ ու թ իւ ն ը մ ի ն չ և Ս ա ր գ ա ն ա պ ա լ և « և ս մ օ տ ա գ ո յ ն » : Մ ե ն ք կ ա ե ն ն ե ք ն եր -
 ք ե ու մ թ է մ ե ր ա յ բ ա ց ա տ ր ու թ իւ ն ը , որ հ ի մ ն ու մ է բ ն ա գ ի բ ա ո ա ց ի
 մ ե կ ն ու թ ե ա ն վ ր ա յ , ո Ր չ ա փ է ճ շ մ ար տ ու մ :

Սրանից յետոյ, վերջապէս, Խորենացին սկսում է քաղաածներ Մարաբից. «Ահա իմ և երեւելիք . . . Յորոց մի էր և յապետութեանն Հայկ, անուանի և քաջ նախարարն, կորովածիգ և հաստաղեղն»։ Եւ աւելացնում է Խորենացին. «Եւ այս կարգ զրուցաբանութեան դադարումն առցէ, զի հանդէս է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառջի նսն մեր և զբոլն նախնիս»։ Մենք Պարոյրի մասին խօսելիս էլ արգէն տեսանք (յօդ. Ե.), որ բոլն նախնիք անուանուում են Խորենացուց Հայկի սերունդը մինչև Արայ inclusion, և թէ Անուշաւանից մինչև Սկայորգի՝ կոչուում են անհարազատ, իսկ Պարոյրով սկսում է, ըստ Խորենացու՝ բնիկն երի վերստին կանգնումը. — «Արգ, ասում է Խորենացին, ի նոյն մատենէ (Մարաբասայ) սկսեալ ասացից. Յապետութէ, Մերոգ, Սիրաթ, Թակլադ, որ է՝ Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ, Յետ որոյ նոյն ժամանակագիր (Մարաբաս) յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արմենակ, և զայլն ի կարգի, զորոց յառաջագոյն ասացաք»։ Մեզ թւում է թէ՛ այս խօսքերով Խորենացին մի տեսակ համառօտակի երկրորդում է (récapitulation) Մարաբասի բովանդակութիւնը. Ուրեմն և՛ Մարաբաս «անհեղեղ և յաղթանդամ» հսկաներից սկսելով՝ գալիս հասնում էր Հայկին, Արմենակին, և այլն ըստ կարգի, որոնց մասին Խորենացին յառաջագոյն յիշած է եղել, Եւ իսկապէս, Խորենացու այդ յառաջագոյն յիշատակութիւնը գտնում ենք Ա. գիրքի 5 գլխում, որտեղ թուած են՝ Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ, Արմենակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա, Արամ և Արայ, երևում է, որ այսչափն էր միայն՝ Խորենացու ունեցած Մարաբասի բովանդակութիւնը, որն և ընդհատուում էր, ինչպէս և սկզբից կարելի էր գուշակել, Արայի վրայ, և Խորենացին ուրիշ աղբիւրն երի օժանդակութեամբ ի նքքը «ձգեց» — շարունակեց Արայի յաջորդների պատմութիւնը՝ հասցնելով մինչև Սարգանապաղ և դեռ աւելի էլ մեզ մօտիկ ժամանակով՝ մինչև Վահէ, «ձգելով զմեր բնիկ նախարարութիւնս մինչև ցՔաղդէացուց Սարգանապալլոս, և ևս մօտագոյն»։

Խօսք չկայ որ այս 8 և 9 գլուխները ամբողջապէս Մարաբասիցն են, բացի հարկաւ, Խորենացու մի քանի դատողութիւններից։

(Շարունակելի)

ՄԻԱԲԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.